



### Ը. ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ ԽԱԶԻ



#### ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Բան, եւ անմահ՝ եութեամբ, որ յանձն առիր մարմնանալ սուրբ եւ միշտ կոյս Աստուծածինէն, անփոփոխելիդ՝ մարդ դառնալով խաչուեցար, Քրիստոս Աստուած եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութան, արժանի փառքի՝ Հօր եւ Հոգւոյն հետ փրկէ՛ մեզ:

#### ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԲՉ

Օրհնութիւն մատուցանենք յաւերժի Թագաւորին, որ մարմնացաւ Կոյսէն, աշխարհս հաստատեց անսասան հաւատքով, փառք Անոր այժմ եւ յաւիտեան:

Բանն Աստուած որ կամովին համբերեց խաչի մահուան եւ իր սուրբ արիւնը թափեց տիեզերքի փրկութեան համար, փառք Անոր այժմ եւ յաւիտեան:

Աստուածօրէն յարութիւն առաւ Նորափոր վեմէն, լուսաւորեց իր սուրբ Եկեղեցին ի փառս եւ ի գովեստ Իր անուան, փառք Անոր այժմ եւ յաւիտեան:

## **ՄԵՍԵՂԻ (Սաղմոս 64, 2 եւ 3)**

Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը վայելէ եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թո՛ղ բարձրանան:

Աղօթքներս լսէ՛, եւ ամէն մարմնաւոր էակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:

## **ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐ**


**Պօղոս առաքեալին եփեսացիներուն ուղղած թուղթէն**

**(Եփս 1, 1-14)**

Պօղոս, Աստուծոյ կամքով առաքեալ Յիսուսի Քրիստոսի, Եփեսոսի սուրբերուն եւ Քրիստոսի հաւատացեալներուն: Ձեզի, շնորհք եւ խաղաղութիւն Աստուծոյ մեր Յօր եւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի կողմէ:

Օրհնեալ է Աստուած եւ Հայրը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի, որ մեզ օրհնեց ամէն տեսակ հոգեւոր օրհնութիւններով ի Քրիստոս երկինքի մէջ: Աշխարհի հաստատութենէն առաջ Աստուած մեզ ընտրեց Քրիստոսի միջոցաւ, որպէսզի ըլլանք սուրբ եւ անարատ՝ սիրով: Նախասահմանեց մեզ իր որդեգրութեան՝ Յիսուս Քրիստոսով:

Այս եղաւ Աստուծոյ կամքին հաճութիւնը, ի գովաբանութիւն իր շնորհքի փառքին եւ մեզ երջանկացուց իր սիրելի Որդիին միջոցաւ: Քրիստոս տուաւ մեզի փրկութիւնը իր արիւնով եւ մեղքերու թողութիւնը՝ առատութեամբ իր շնորհքին, զոր Աստուած շռայլեց մեզի, ամենայն իմաստութեամբ եւ գիտութեամբ: Մեզի յայտնեց իր կամքին խորհուրդը, ըստ իր հաճութեան եւ զոր կանխաւ դրած էր Քրիստոսի մէջ, իրականացնելու համար զայն ժամանակներու լրումին, եւ բովանդակելու՝ ամէն բան Քրիստոսով, թէ՛ երկնայինները, թէ՛ երկրայինները: Քրիստոսով մենք ընտրուեցանք եւ կանխաւ սահմանուեցանք ըստ առաջադրութեան



Աստուծոյ, որ ամէն բան կը հովուէ իր կամքին համաձայն, ի գովաբանութիւն իր փառքին, անոնք, որոնք կանխաւ յուսացին ի Քրիստոս: Դուք ալ, ճշմարտութեան խօսքը, ձեր փրկութեան Աւետարանը՝ լսելէ եւ անոր հաւատալէ ետք, Քրիստոսի մէջ դրոշմուեցաք կնիքով՝ խոստումի Հոգիին: Այն Հոգիին, որ գրաւականն է մեր ժառանգութեան եւ կը պատրաստէ փրկութիւնը ժողովուրդին, զոր Աստուած ընտրեց իր փառքին գովութեան համար:

**Ալէլուիա, Ալէլուիա,**

Մեզ վերակենդանացնել միայն դո՛ւն կրնաս եւ այն ատեն քու ժողովուրդդ իր ուրախութիւնը քու մէջդ պիտի գտնէ:

**(Սաղմոս 84, 7)**

**Ալէլուիա:**

**ԱՒԵՏԱՐԱՆ  
ԱՄԷՆ ԳԱՂՏՆԻՔ ՊԻՏԻ ՅԱՅՏՆՈՒԻ  
(Դուկ 8, 17-21)**

Մեր Տէր Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Չկայ գաղտնիք, որ օր մը երեւան չելլէ, եւ ո՛չ ալ ծածուկ բան մը, որ չգիտցուի եւ չյայտնուի: Այսուհետեւ տեսէք, թէ ինչպէս կը լսէք. որովհետեւ ունեցողին պիտի տրուի եւ չունեցողէն՝ ունեցածն ալ պիտի անուի»: Յիսուսի մայրն ու եղբայրները եկան զինք տեսնելու, սակայն բազմութեան պատճառով չկրցան իրեն մօտենալ: Լուր բերին Յիսուսի թէ մայրդ ու եղբայրներդ դուրսն են եւ կ'ուզեն քեզ տեսնել: Յիսուս պատասխանեց. «Իմ մայրս ու եղբայրներս անոնք են, որոնք կը լսեն Աստուծոյ Խօսքը եւ զայն կը գործադրեն»:



**ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ**


**ԱՅՆ ՈՐ Կ'ԱՆՍԱՅ ՅԻՍՈՒՄԻ ԽՕՍՔԻՆ՝  
ԿԸ ԴԱՌՆԱՅ ԱՄԵՆԱՄՕՏԻԿԸ ՔՐԻՍՏՈՍԻ**

Այսօրուան Աւետարանին մէջ կը պատմուի թէ Յիսուսի մայրն ու եղբայրները քովը եկան, սակայն բազմութեան պատճառով չհասան անոր: Երբ Յիսուս իմացաւ անոնց ժամանումը, պատեհ առիթը օգտագործեց փոխանցելու համար կենսական ճշմարտութիւն մը. գերազանցել արեան կապը ու հասնիլ հոգեւորին: Յիսուսի տուած խիստ պատասխանը իր մօր եւ աշակերտներուն, մերժում եւ ժխտում մը չէր Մարիամի մայրութեան եւ աշակերտներուն եղբայրութեան, ոչ ալ իր սիրոյն՝ որպէս որդի եւ եղբայր: Յիսուս

կը հաստատէ հոգեւոր նոր կապ մը իր բոլոր հետեւորդներուն միջեւ:

Այսուհետեւ ամէն հաւատացեալ, որ կը լսէ Աւետարանի Խօսքը ու կ'ապրի անոր հոգիին համաձայն. յանձն առնելով անոր ցուցմունքները, մայր եւ եղբայր կը դառնայ Քրիստոսի: Մարիամ Կոյսը մասնաւորապէս ու Առաքեալները եղան առաջին հաւատացեալները, որոնք լսեցին Խօսքը եւ յանձն առին զայն ապրիլ ու հետեւիլ Քրիստոսի: Յիսուս երբեք չուրացաւ իր սիրելի մօր դերն ու արժանիքը, երբեք չարհամարհեց արեան կապը, ան յստակացուց

անոր մեծութիւնը, որով անսալով խօսքին՝ յանձնառու մնաց անոր իր ամբողջ կեանքին մէջ: Ան որ կ'անսայ Յիսուսի խօսքին ու ըստ այնմ կը գործէ՝ ան է ամենամօտիկը Զրիստոսի: Այսպէս Յիսուս միայն մէկ մայր եւ քանի մը եղբայրներ չունի, այլ բոլոր անոնք որոնք մտիկ կ'ընեն Աւետարանի խօսքը եւ զայն կ'ապրին, անոնք եւս մայր եւ եղբայրներ կը դառնան իրեն:



Աւետարանին ներկայ հատուածը ցոյց կու տայ թէ Յիսուսի խօսքերը եւ կեցուածքը մարդոց հանդէպ չեն մերժեր ոչ ոք, խտրութիւն չեն դներ մարդոց միջեւ, չեն զանազաներ մէկը միւսէն, այլ՝ կը մօտեցնեն ու կը միացնեն իւրաքանչիւրը: Աւետարանի խօսքը մտիկ ընելով՝ հոգեւոր ամուր կապ մը կը հաստատուի ու անով կը միանան Զրիստոսի: Մարդիկ Յիսուսի մայր եւ եղբայր կը դառնան ընդունելով խօսքը ու անոր համաձայն ապրելով: Ղուկաս Աւետարանիչը այս փոխարարքերութիւնը Աստուծոյ եւ մարդուն միջեւ շեշտեց երկու բայերով. «լսել» Աստուծոյ խօսքը եւ զայն «գործադրել», որովհե-

տեւ չկայ հաւատք առանց գործելու: Ծճմարիտ ունկնդրութիւնն ու հնազանդութիւնը Զրիստոսի խօսքին՝ կը թոյլատրեն մարդուն մաս կազմելու անոր ընտանիքին եւ Եկեղեցւոյ: Յիսուս կը սորվեցներ, թէ լսելը աւելի արդիւնատու է եւ առաջնակարգ է քան տեսնելը:

Ծճմարիտ քրիստոնեան պարտի միանալ Աստուծոյ, անոր խօսքը լսել ու դառնալ գործօս անդամ Եկեղեցւոյ կեանքին մէջ:



## Հետեւեցէք

Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան

# ԼՈՅՍ ԶՈՒԱՐԹ

պատկերասփիւռի յայտագրին

Ամէն Երկուշաբթի, երեկոյան ժամը 7:15-ին  
Կրկնութիւնը  
Ուրբաթ կ.ե. 1:00 - 2:30  
Շաբաթ առաւօտեան 5:00 - 6:30



Նոր ալ Շաբթ  
Կայանէն

NileSat  
11096 H

[www.noursat.tv](http://www.noursat.tv)

Tel.: 01/ 570 559 - Fax: 01/ 570 558 e-mail: [eparchy@armeniancatholic.org](mailto:eparchy@armeniancatholic.org)  
[www.armeniancatholic.org](http://www.armeniancatholic.org)